ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՈՐՈՇՈՒՄ

(Քաղվածք «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների համատեղ նիստի)

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 9-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների կանոնադրությունները՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունները համատեղ նիստում

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հավանություն տալ «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծին:
2. Նախագծի հիմնական զեկուցող նշանակել ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանին:

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝
ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՏԻԳՐԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

08.04.2025թ.

ՆԱԽԱԳԻԾ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը որոշում է՝

1. Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածը և «Ազգային ժողովի Կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածը, ստեղծել Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ՝ քննելու ՀՀ ԱԺ պատգամավոր, Քաղաքացիական պայմանագիր խմբակցության անդամ Անդրանիկ Գրիգորի Քոչարյանի վարքը:
2. Ժամանակավոր հանձնաժողովի անդամների թիվը սահմանել 5:
3. Ժամանակավոր հանձնաժողովի գործողության ժամկետը սահմանել մինչև 2 ամիս:
4. Պատգամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ եզրակացության ներկայացման ժամկետը սահմանել մինչև ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետի ավարտը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» ԱԺ որոշման նախագիծը ներկայացնելու անհրաժեշտությունն առաջացել է 2025 թվականի մարտի 20-ին ԱԺ միջանցքում ցուցաբերած ԱԺ պատգամավորի վարքը քննելու համար, քանի որ Անդրանիկ Քոչարյանը լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանի նկատմամբ ցուցաբերել է ակնհայտորեն անհարգալից վերաբերմունք:

«Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության և երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի 2-րդ և 8-րդ կետերը հստակ սահմանում են, որ պատգամավորը պարտավոր է՝
2) հարգել հանրության բարոյական նորմերը,
8) հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, ***լրագրողների***, ինչպես նաև բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

Պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը 2025 թվականի մարտի 20-ին ԱԺ միջանցքում սեռի հիմքով խտրական վերաբերմունք դրսևորելով վիրավորել է լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանին՝ ասելով՝ «շուրթերդ մաքրի» ապա նաև նրան արգելելով կանգնել իր կողքին՝ դարձյալ խտրականություն դրսևորելով, թե «դուք այստեղ մի կանգնեք, այդպես եմ ուզում... դուք լրագրող չեք, լրագրողները իրենք են»՝ մատնացույց անելով մյուս լրագրողներին: Այս արարքներով նաև լրագրողի նկատմամբ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերվել:
Բացի այդ, համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի՝

Արգելվում է՝

2) որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ,

3) լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը,,:

Հաշվի առնելով այս իրողությունները, ՀՀ ԱԺ «Հայաստան» և «Պատիվ ունեմ » խմբակցությունները անհրաժեշտություն են համարում նման դեպքերը բացառելու նպատակով ստեղծել ԱԺ էթիկայի ժամանակավոր հանձնաժողով, քննելու պատգամավորի վարքը և տալու եզրակացություն՝ նման վարքի կրկնությունը բացառելու նպատակով:

Հարկ ենք համարում նաև արձանագրել,որ ԱԺ աշխատակազմի ղեկավարը նույնպես տվել է դրական եզրակացություն «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ

Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու » անհնրաժեշտության վերաբերյալ:

(Եզրակացությունը կցվում է:)